

1. Պ. ԴՈՒՐՅԱՆ. Տաղք, Փորձ մը բնագրային վերականգնումի, ճրատարակեց Արա Գալայճյան, Երուսաղեմ, 1967, 157 էջ:

2. Նամակաճի Պետրոս Դուրյանի, ճրատարակեց Արա Գալայճյան, Երուսաղեմ, 1968, 37 էջ:

Պետրոս Դուրյանի երկերի բազմաթիվ հրատարակություններից ուսումնասիրողներն արդարացիորեն առանձնացնում են «Տաղք և թատերգությունք, նամականի, դամբանական, տապանագիր» ժողովածուն (Կ. Պոլիս, 1893)։ Սա քննական հրատարակություն էր, որի կազմողը ուսուցիչ Բարսեղ էքսերճյանը, տողատակին նշել ու վերացրել էր 1872 թ. լույս տեսած «Տաղք և թատերգությունք» ժողովածուի բանաստեղծությունների իր նկատած աղավաղումները։ Սակայն այդ ժողովածուն ևս անթերի չէր։ Ամենից առաջ, զրաքննական նկատառումներով դուրս էին մնացել Պ. Դուրյանի հայրենասիրական ու սոցիալական քերթվածները, որոնց շատ էր դիպել Սիմոն Ֆելեկյանի (առաջին ժողովածուի բանաստեղծությունների տեքստ պատրաստողի) ավերիչ ձեռքը։ Մյուս կողմից, որ նույնպես կարևոր է, էքսերճյանը թույլ էր տվել իմաստն աղճատող բազմաթիվ վրիպակներ, վանկուրառային սխալներ, կետադրական «անթիվ» անճշտություններ, որոնք ցույց էր տվել երիտասարդ Արշակ Չոպանյանը ժողովածուի առաջին երեք սամուլների մասին գրած իր «Դուրյանի նոր տպագրության առթիվ» գրախոսականում։

«Սկյուտարի սոխակի» ստեղծագործությունների բարեխիղճ հրատարակությունը հրամայաբար անհրաժեշտ էր դարձել։ Այդ ձեռնարկը կարող էր իրականացնել բանասեր ու բանաստեղծ Եղիշե (Միհրան) Դուրյանը, որի մոտ էին գտնվում եղբոր ինքնագրերը։ Բայց ինչ-ինչ պատճառներով Ե. Դուրյանը ձեռնպահ մնաց։ Նույնիսկ 1908 թ. Կ. Պոլսում «Եղիշե Սրբազան Դուրյանի բարեհաճ արտոնությամբ» տպագրված «Երգեր ու տաղեր» ժողովածուի բանաստեղծությունները ներկայացված էին ֆելեկյանական խմբագրմամբ (այստեղ ամփոփված էին էքսերճյանի հրատարակությունից դուրս թողնված

և զրաքննությունից տուժած գործերը)։ 1921 թ., երբ Ե. Դուրյանը Երուսաղեմի պատրիարքն էր, Ա. Չոպանյանը իր իսկ խոստովանությամբ հորդորել է նրան իրագործել Պ. Դուրյանի երկերի քննական խնամյալ հրատարակությունը՝ հիշեցնելով, որ «ատիկա անհետաձգելի պարտականություն մըն էր Դուրյան պատրիարքի կողմից դեպի իր եղբոր հիշատակը»²։ Ժիշտ է, Բաբկեն Կյուլեսերյանի վկայությամբ Ե. Դուրյանը կյանքի վերջին տարիներին մտադրվել էր «իր հսկողության ներքև» հրատարակել եղբոր գործերը³, բայց վերահաս մահը (1930) խափանեց նրա մտադրությունը։ Հետագա տարիներին ևս Ա. Չոպանյանին հուզել է «պաշտելի քնարերգակի» «ամբողջական գործին կանոնավոր հրատարակության» խնդիրը և այդ նպատակով նա քանիցս հրապարակավ դիմել է Երուսաղեմի միաբանությանը (1921 թվականից Երուսաղեմի հայկական պատրիարքարանում են պահվում Պ. Դուրյանի ձեռագրերը)։ «Այդ լիակատար հավաքածուին Լրեման այսքան երկար ատեն ուշացած ըլլալը ամոթ մըն է մեր ազգին համար... Պետրոսին սուրբ հիշատակին հանդեպ մեր ազգին վրածանրացող այդ պարտականությունը դեռ երկար ատեն չկատարված պահել—աններելի ապերախություն մը պիտի ըլլա»—վրդովված գրել է նա⁴։ Պ. Դուրյանին նվիրված իր ուսումնասիրությունում Չոպանյանը վերստին հույս էր հայտնում, որ այդպիսի հրատարակությունը զուտ կգա։ Նա միաժամանակ այդ աշխատության մեջ լայնորեն ներկայացրեց Եղիշե Դուրյանի տրամադրած նյութերը և առաջին անգամ մատնանշեց ինչպես մի շարք տաղերի պահպանված ա-

2 «Անահիտ», հանդես, Փարիզ, 1939, թիվ 2, էջ 60—61։

3 «Սիոն», հանդես, Երուսաղեմ, 1930, թիվ 4—5, էջ 150։

4 «Անահիտ», 1947, թիվ 2, էջ 50։ Տե՛ս նաև 1932—1933, թիվ 5—6, էջ 213։

1 «Հայրենիք», օրաթերթ, Կ. Պոլիս, 1892, 19 սեպտեմբեր, թիվ 246։

ղավաղումները, այնպես էլ հեղինակային սրբազրույթները⁵։

Պ. Դուրյանի երկերի ճշգրտված հրատարակության բացակայությունը պատճառ դարձավ, որ տասնամյակներ շարունակ աշխարհի այլևայլ քաղաքներում տպագրված ժողովածուների տեքստերի պատրաստողները դիմեին նախորդ, առավելագույն 1893 թ. տպագրությանը։

Եվ ահա, վերջապես, նախ «Սիոն» հանդեսում (1967, թիվ 9—10, 11—12, 1968, թիվ 1—2, 3—4, 5—6, 7—8), ապա և առանձին գրքերով տպագրվեցին Պետրոս Դուրյանի տաղերն ու նամակները՝ Արա Գալաթյանի աշխատասիրությամբ։

Նախ տաղերի մասին։

Ժողովածուին կցված է մի առաջաբան («Իրեւ մուտք»), որտեղ Ա. Գալաթյանը տալիս է Պ. Դուրյանի բանաստեղծությունների աղավաղման համառոտ պատմությունը, նկարագրում գրողի Երուսաղեմի պատրիարքարանում պահվող արխիվը, ինչպես և անում առանձին դիտողություններ։

Դրանցից առանձնապես արժեքավորը Դուրյանի արխիվին վերաբերող տեղեկություններն են։ Դեռևս Ս. Սիմոնյանի ուղեգրություններից⁶ և Ա. Չոպանյանի արխիվի նյութերից հայտնի էր, որ Պ. Դուրյանը ունեցել է բանաստեղծությունների երկու տետր, որոնցից առաջինն ամփոփել է նախնական տեքստերը և երկրորդը ավարտունը։ Այս երկրորդ տետրի տաղերի ցանկը հրապարակել է Ա. Չոպանյանը⁷։ Բայց թե ինչ գործեր է պարունակել նախնական տետրը, իմանում ենք միայն Ա. Գալաթյանի հաղորդումից։

Բրականացնելով Դուրյանի տաղերի նոր հրատարակությունը, Ա. Գալաթյանը դիմել է ինքնագրերի երկրորդ տետրին, ուր, ինչպես արդեն ասվեց, տեղ են գտել բանաստեղծությունների վերջնական տեքստերը։ Հրատարակիչը դրանց հանդիպադրել է 1872 թ. ժողովածուի տաղերի տեքստերը, իսկ Բ. էքսերճյանի աղավաղումները ցույց է տվել անխաթար տեքստի տողատակին։ Կատարված է ավելի քան երեք հարյուր ուղղում, որոնք ըստ իրենց բնույթի կարելի է բաժանել երեք խմբի. ա) իմաստային, բ) կետադրական և գ) վանկային։

5 Տե՛ս Արշակ Չոպանյան, Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը, Երկրորդ տպագրություն՝ վերամշակված ու ճշգրտված, Երևան, 1967, էջ 170—176, 181—197։

6 Տե՛ս «Սփյուռք», շաբաթաթերթ, Բեյրութ, 1959, թիվ 32, էջ 3։

7 Տե՛ս Ա. Չոպանյան, նշվ. աշխ., էջ 181—182։

Ա. Գալաթյանի հրատարակած տաղերն արդյոք հարազատորեն են վերարտադրում հեղինակային բնագրերը, չկա՞ն սխալ ընթերցումներ։ Առանձին վրիպումներ, ինչպես կտեսնենք, կան, բայց սկզբունքորեն այդ ուղղումները ճիշտ են և ապացուցվում են այլ հավաստի տվյալներով։ Նախ՝ Ս. Ֆելեկյանը, ինչպես վկայում է Ա. Գալաթյանը, իր խմբագրումները կատարել է Դուրյանի տաղերի երկրորդ տետրի վրա «տարբեր գույն մելանով և երբեմն մատիտով»։ Իր մեթոտը եղած է «սրբագրելի» բառին վրայեն բարակ գիծ մը քաշել և տողերուն միջև գտնվող ազատ միջոցին վրա ավելացնել «սրբագրությունը» (էջ է)։ Նման պարագայում հասկանալի է, որ տեքստը պատրաստողը կարող էր ֆելեկյանականը տարբերել դուրյանականից։ Բայց, ինչպես ասացինք, կան նաև ստուգիչ այլ աղբյուրներ։ Ամենից առաջ նշենք ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԽ) Ա. Չոպանյանի ֆոնդում պահվող հարուստ նյութերը։

Ընդառաջելով Ա. Չոպանյանին, Ե. Դուրյանը 1891 թ. Արմաշից (որի դպրեվանքի փոխտեսուչն էր նա 1890—96 թթ.) նրան է ուղարկել սովորական տետրի հինգ էջի վրա նշումներ։ Այս փաստաթղթում ուշագրավ է Պ. Դուրյանի տաղերի երկրորդ տետրի ցանկը՝ գրության թվականներով ու Ե. Դուրյանի թուղթիկ նկատողություններով։ Գրողի եղբայրը անհրաժեշտ է համարել խոսել միայն «գլխավոր սրբագրությունը» կրած «Սիրեցի քեզ» և «Ներսէս հետ» քերթվածների մասին, իսկ մյուսների կապակցությամբ նկատել է. «Մնացյալ սրբագրությունքն բավական աննշան փոփոխություններ են, ավելորդ համարեցի նշանակել զայնս»⁸։ Սա չի զոհացրել Չոպանյանին և նա դիմել է իր երբեմնի դասընկեր, Արմաշի դպրեվանքի մաթեմատիկայի ուսուցիչ Մաքսուտ Միհրդատյանցին՝ խնդրելով «մատնանիշ ընել Պետրոսի բանաստեղծությանց մեջ Սիմոն Ֆելեկյանի մտցուցած ձախավեր «սրբագրությունները»։ Վերջինս ոչ միայն այդ է արել, այլև «նշանակած է այն սրբագրությունները, զորոնք ինքն իսկ Պետրոս կատարած է իր տաղերու վրա, երբ զանոնք առաջին տետրե մը ընդօրինակած է երկրորդ տետրի մը մեջ, ուր իր տաղերուն տված է վերջնական ձև մը»⁹։ Մ. Միհրդատյանցը Դուրյանի բանաստեղծությունների առանձին տողեր ընդօրինակել է կարմիր թանաքով, կապույտով ցույց է տվել դրանց հեղինակային փոփոխություն-

8 ԴԱԽ, Ա. Չոպանյանի ֆոնդ, չվերամշակված նյութեր։

9 Ա. Չոպանյան, նշվ. աշխ., էջ 4—5։

ները և սևով՝ Ս. Ֆելեկյանի խեղաթյուրումները: Համեմատությունը պարզում է, որ Մ. Միհրդատյանցի և Ա. Գալայճյանի ուղղումները մեծ մասամբ համընկնում են, այն տարբերությամբ, որ Մ. Միհրդատյանցն անհամեմատ քիչ աղավաղումներ է մատնանշել, թեև 1892 թ. նոյեմբերի 8/20 թվակիր նամակում նա Չոպանյանին հավատացնում է. «Ապահով եղիր, դուրսը բնավ սրբադրություն չը մնար»¹⁰, Բայց հարկ է նկատել, որ նա դիտողություններ է արել միայն այն տաղերի մասին, որոնք Չոպանյանը ներկայացրել է նրա ուշադրությանը: Եվ քանի որ Չոպանյանը մի քանի բանաստեղծությունների կարևորություն չի ընծայել (օրինակ՝ Մ. Խրիմյանին ձոնված քերթվածներին) կամ էլ աղավաղված չի համարել, ապա դրանց առթիվ Միհրդատյանցը որևէ նշում չի արել: Դրանով էլ պետք է բացատրել, որ Ա. Գալայճյանի հրատարակությունում ուղղումներն ավելի շատ են: Հարց է ծագում՝ վստահելի՞ են արդյոք Երուսաղեմի ժողովածուի տեքստերը: Պատասխանը դարձյալ դրական է: Այսպիսի դեպքերում օգնության են դալիս Պ. Դուրյանի կենդանության օրոք տպագրված առանձին բանաստեղծությունների տեքստերը, որոնք հաստատում են, թե Ա. Գալայճյանը դարձյալ ճիշտ է վերականգնել բնագրերը: Ահա այդպիսի մի օրինակ: «Ի պատրիարքական ընտրություն Ամեն. Հայրիկին» ոտանավորի 25-րդ և 29-րդ տողերը 1872 թ. (ն հետագա) ժողովածուներում եղել է.

Բոցաբրոնիչ Հայե ԱՌ Հայ նա թրոավ,
Կր հագնեւ Սեւ ՈՒ գրգլլակ.

Երուսաղեմի ժողովածուում այս տողերը ունեն հետևյալ տեսքը.

Բոցաբրոնիչ Հայե Ի Հայ նա թրոավ,
Կր հագնեւ Սեւ ԵՎ գրգլլակ.

Բանաստեղծության առաջին անգամ տպագրված տեքստը¹¹ ևս ցույց է տալիս, որ հետագայում Ս. Ֆելեկյանն այն աղավաղել է:

¹⁰ «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, Ն 1, էջ 152: Առանձին նշումներում ևս նա հայտնում է. «Այս գրվածներեն դուրս սրբադրություն չը կա ոչ առաջին տետրակին մեջ, ոչ առաջինեն երկրորդին անցած ժամանակ և ոչ էլ երկրորդին մեջ» (ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆոնդ):

¹¹ «Օրագիր ծիլն Ավարայրվո», Կ. Պոլիս, 1869, հոկտեմբեր 2, թիվ 21: Լրագրի այս և մի քանի այլ համարների միկրոֆիլմերն ստացել ենք Փարիզի Նուպարյան մատենադարանից, Ա. Դարբինյանի և Ա. Սալմասլյանի ջանքերով, որոնց և հայտնում ենք մեր անկեղծ շնորհակալությունը:

Որ իսկապես Ա. Գալայճյանի կատարած ուղղումները սկզբունքորեն ընդունելի են, ցույց են տալիս այլ փաստեր ևս: Ժամանակին Մինաս Չերաղը տողացի թարգմանելով Պ. Դուրյանի քերթվածները, առանձին տողերի կապակցությամբ տարակույսներ է ունեցել: Այսպես, «Առկույսն» բանաստեղծության «Ո՛վ, մինչ յ՛ե՛րբ, ըսե՛, ո՛ կույս, հոգիս ըլլա գեղույդ գերի» տողի ընդգծված բառի առթիվ դիտել է, որ այն տաղաչափորեն սխալ է, չի ամբողջացնում 16 վանկանի տողը և առաջարկել է մինչև ձևը¹², Երուսաղեմի ժողովածուի տեքստը վկայում է, որ սա սեղին դիտողություն է:

Մենք դիտավորյալ բերեցինք տարբեր բնույթի կողմնակի մի քանի ապացույց, որպեսզի պարզ դառնա, թե Ա. Գալայճյանը որքան բարեխիղճ և ուշադիր է մոտեցել գործին: Բառիմաստային վերականգնումները վստահություն են ներշնչում, որ ճիշտ են նաև կետադրական և վանկային ուղղումները:

Մեզ թվում է, սակայն, որ Ա. Գալայճյանը թույլ է տվել առանձին աղավաղումներ: Խոսքը վերաբերում է «Ձ՛նն պաշտեմ» բանաստեղծությանը: 1872 թ. ժողովածուում այդ քերթվածի 40-րդ տողն էր.

Ես կր պաշտեմ գ՛իմ ՊԻՍՈՍ.

Ի. էքսերճյանը ընդգծված բառը դարձրել է «Պ...»՝ ցույց տալով, որ առաջինը Ս. Ֆելեկյանի աղավաղումն է: Ա. Գալայճյանը այս ուղղման հետ համաձայն չէ: «...Ձեռագիրներու ուսումնասիրութենեն երևան կու գա, որ Դուրյան ի՛նք անձնապես Պիստոս գրած է... Բաղդատելով ձեռագիր երկու տետրակները, կտեսնվի որ առաջին, սևագրության տետրակին մեջ միայն «Պ...» դրված է, մինչ երկրորդին մեջ (որ ավելի ուշ ընդօրինակված է և սրբադրությամբ՝ վերջնական ձև ստացած քերթվածները կպարունակեն), «Պիստոս» լման ձևով կ՛երևի, նույնինքն Դուրյանի ձեռագրով: Հետևաբար ուրիշներու կողմն կատարված հավելում մը չէ այդ անունը: Մյուս կողմն, պետք է ուշադրություն դարձնել, որ «Պիստոս» բառը, յոթերորդ տան առաջին տողին իբր վերջին բառ, հանգաբանական կամ հնչական ո՛չ մեկ առավելություն կ'ընծայե բանաստեղծին՝ հաջորդ երեք տողերուն առնչությամբ. ուրեմն այդ անունը հո՛ն, հայտնապես դրված է իբր բնական և զգացական մեկ ներքին ստիպման ու պատճառի արդյունք և թերևս կենդանացնե իրապես այդ անունով սիրված էակ մը» (էջ Ժ): Նկատենք, որ «Պ...» է նաև

¹² «Poètes Arménens», ժողովածու, փարիզ, 1913, էջ 11:

բանաստեղծության ԳԱԹ-ում պահվող ինքնագիր օրինակում, որո նախնականն է։ Բայց ամբողջ հարցն այն է, որ երկրորդ տետրակի խոստոս-ն աղավաղում է։ Ե. Դուրյանը, որ շատ լավ դիտեր եղբոր ձեռագրերը, ահա թե այդ մասին ինչ է հայտնել Ա. Զոպանյանին 1891 թ. օգոստոսի 30-ի նամակում. «Զայդ անունն քերթողն ինքը չէ նշանակած, միայն «Պ» սկզբնատուն գրած է յուր քերթվածոց հին ձեռագրին մեծ, և նորույն մեջ ալ ուրիշի մը ձեռամբ հավելլալ է Պ-ի քով (խոստոս)»...¹³ Ավելի մանրամասն է խոսում Մ. Միհրդատյանցը 1891 թ. սեպտեմբերի 23-ի նամակում. «Պիստոս անունը վավերակա՞ն է,— գրում է նա,— Տեսա այդ բառը ձեռագրին մեջ. Դուրյանի գիրերը շեղ են բնավորությամբ և «Պ» գիրը առանձին մնալու համար գրվածի ձև ունի և կատարելապես հայտնի է, որ «խոստոս»-ը վերջին ավելացված է բնականեն տիպ գիր ունեցող մեկն մը, որպիսի է Ֆելեկյան, այս ալ կերևի իր սրբագրություններեն»¹⁴։ Ուրեմն ոչ մի տարակույս, որ «Պիստոս»-ը աղավաղում է։

Այնուհետև, հիշյալ բանաստեղծության 40-րդ տողը թե՛ 1872 թ. և թե՛ 1893 թ. ժողովածուներում տպված է։

Ես դողդոջամ իր վրեա,

Իսկ Ա. Գալայճյանը այդ տողը ներկայացնում է հետևյալ տեսքով.

Ես ԿԸ դողդոջամ իր վրեա,

Հրատարակիչը ընդգծված մասնիկի կապակցությամբ տողատակին որևէ նշում չի արել։ Մեր կարծիքով դա վրիպակ է, քանի որ ԳԱԹ-ի տեքստում ևս այն բացակայում է։

Ի դեպ, տողատակի նշումների մասին Արդեն ասվեց, որ Ա. Գալայճյանը. էքսերճիանի թույլ տված աղավաղումները ցույց է տվել ճշգրտված տեքստի տողատակին։ Եվ դրանց քանակը հսկայական է. ավելի քան 280։ Այս սխալները հիմնականում վերաբերում են գաղտնավանկերին (էքսերճյանն այս խնդրում իրեն շատ է ազատ զգացել և ժամանակին Զոպանյանը բերել է նման կամայական մոտեցման տասնյակ օրինակներ)։ Բայց Ա. Գալայճյանի նշումները զգալիորեն կպակասեն, եթե նա ուղղորդություն դարձնե 1893 թ. ժողովածուի վրիպակների պատկառելի ցանկին, ուր էքսերճյանը մտցրել է բազմաթիվ ուղղումներ։ Օրինակ, հա-

մաձայն Ա. Գալայճյանի, 1893 թ. ժողովածուում «Էճակի» 6-րդ և 42-րդ տողերի ալլակիդ և հուզին բառերի փոխարեն տպվել է ալլակիդ և հուզեն, մինչդեռ դրանք ուղղված են։ Նման օրինակների թիվը հասնում է տասնյակների¹⁵։

Միաժամանակ Երուսաղեմի հրատարակչությունում նշված չեն առանձին աղավաղումներ։ Անխորագիր («Ա») բանաստեղծության 52-րդ տողը 1872 թ. և 1893 թ. ժողովածուներում տպագրված է։

Հեղեհի ՊԵՍ բոցավառեւ զհուրիզոն։

Ընդգծված բառը Ա. Գալայճյանը փոխել է «նման»-ի՝ առանց որևէ նշման։ Բարեբախտաբար, Մ. Միհրդատյանցի դիտողությունը օգնում է հասկանալու, որ «պես»-ը աղավաղում է։ Բայց կան այլ օրինակներ, երբ Ա. Գալայճյանի տողատակի նշումների բացակայության պատճառով կողմնորոշումը դառնում է դժվար։ Այսպես, Երուսաղեմի ժողովածուում «Տրտունջքի» 11-րդ և 27-րդ տողերն են.

Ու ժպլըրհի ԶԳՏԻԼ՝ սուզիլ խորն երկնի,
Ո՛հ, կը դողդոջեմ, դժգույն եմ դժգո՛ւյն,

Ընդգծված բառերը Ֆելեկյանի ու էքսերճյանի հրատարակչություններում տպագրված են ձգտել և տժգույն եմ տժգո՛ւյն։ Կամ «Կոկոն ծաղիկը կուսին» քերթվածի 26-րդ տողում Ս. Ֆելեկյանի և Ա. Գալայճյանի հրատարակչությունների լույսե բառի դիմաց 1893 թ. ժողովածուում գտնում ենք «լուսե» ձևը։

Աղավաղումներ են սրանք, թե՛ վրիպակներ։ Այս հարցի որոշակի պատասխանը կարող էին տալ Գալայճյանի նշումները, իսկ այդպիսիք, ցավոք, չկան։

Եվ, այնուամենայնիվ, գրախոսվող աշխատության էական բացը այն է, որ հրատարակիչը հարկ չի համարել զետեղել Պ. Դուրյանի տաղերի առաջին տետրի տեքստերը։ Դա թույլ կտար ոչ միայն ամբողջական պատկերացում կազմել բանաստեղծի ստեղծագործական լաբորատորիայի մասին (ասում ենք ամբողջական, որովհետև Մ. Միհրդատյանցի նշումները շատ բան արդեն պարզել են), այլև կօգնե առավել համոզիչ դարձնելու ուղղումները։ Դիշտ է, Ա.

15 Եթե Ա. Գալայճյանը շանտեսներ վրիպակների ցանկը, ապա կնկատեր, որ երբեմն էքսերճյանը այդ վրիպակներում, ֆանալով ուղղումներ կատարել, թույլ է տվել նոր աղավաղումներ։ Այսպես, «նվեր հիշատակի առ պ. Հ. Ժանֆեսճյան, Հուլի» բանաստեղծության 28-րդ տողի («Դարձա՛տ ատեն տրուի ի սիրտ») տրուի բառը դարձված է տրվի, որ բացահայտ սխալ է։

¹³ Մանրեր Երևանի համալսարանի», 1967, № 1, էջ 168։

¹⁴ Նույն տեղում, 1968, № 1, էջ 147։

Գալայճյանը որոշ դեպքերում հենց այդպիսի նկատառումներով հենվել է Դուրյանի քերթվածների նախնական (առաջին տետրի) տողերի վրա, բայց դժբախտաբար դա սկզբունք չի դարձրել։ Ա. Գալայճյանի և Մ. Միհրդատյանցի դիտողություններում (երկուսն էլ օգտվել են նույն տետրերից) կան առանձին «տարակարծություններ» և այդ «վեճեր» կարող էին վերջնականորեն լուծել միայն առաջին տետրի տեքստերը։

Բերենք միայն մի օրինակ։

Հայտնի է, որ «Դրժեղ» քերթվածը նույնպես խեղաթյուրել է Ս. Ֆելեկյանը, իսկ բնագիրը վերականգնել է Բ. էքսերճյանը։ Ա. Գալայճյանը 1893 թ. ժողովածուի տեքստում էական (բառիմաստի) որևէ աղավաղում ցույց չի տալիս, մինչդեռ Մ. Միհրդատյանցը, նկատի առնելով 1872 թ. հրատարակությունը, նշում է նաև 4-րդ, 24-րդ և 30-րդ տողերի հետևյալ աղավաղումները (դրանք փոխանցվել են 1893 թ. և հետագա ժողովածուներին)։

Սիրել ժպիտքն՝ փլթի՝ փլթ անճուն,
Կ'վԱՌԻ երազ մ'որուն մեկ շող,
ԿՈՒՐԾԸՍ ԳՈԳԱԾ՝ մարն իմ աչքին,

Ըստ նրա առանձնացված բառերի ճիշտ ձևերն են համապատասխանաբար՝ փրթթիք, վառե և զոզացած կուրծս։ Թերևս սրանք ընդօրինակման սխալներ են, բայց ահա ճշգրիտապես կենդանության շնորհ հրատարակված տեքստում¹⁶ ևս այս բառերը տպագրված են Մ. Միհրդատյանցի ուղղած տեքստով։ Նա ցույց է տալիս նաև, որ առաջին տետրում նույնպես խնդրո առարկա բառերը փոփոխություն չեն կրել։ Պարզ չէ՝ միթե, որ հարցի վրա լույս կսփռեր բանաստեղծության նախնական տեքստը։

Այժմ «նամականի Պետրոս Դուրյանի» ժողովածուի մասին։

Մենք արդեն առիթ ենք ունեցել ցույց տալու, որ Պ. Դուրյանի նամակները ևս ենթարկվել են փոփոխությունների (շատ հաճախ կամայական) և վերականգնել ենք երկու նամակի՝ Բ. էքսերճյանի հապաված հատվածները¹⁷, Ա. Գալայճյանի հրատարակությունից իմանում ենք, որ Երուսաղեմի հայկական պատրիարքարանում կա գրողի նամականու մի մասը միայն՝ ինը վավերաթուղթ։ Դրանցից բացի ժողովա-

ծուում տպագրված է նաև Վ. Լուսթյանի հիշատակին արտասանված դամբանականը։ Բոլոր այդ նյութերը հանդիպադրված են 1893 թ. ժողովածուի տեքստերին և ընթերցողը հնարավորություն ունի ռադիկալորեն պարզելու բոլոր այն աղավաղումները, որ թույլ է տվել Բ. էքսերճյանը։

Դուրյանի վերջին անթվակիր նամակը (ուղղված Ա. Լուսինյանին) հրատարակված է նաև լուսանկարչական վերարտադրությամբ։ Դրա և տպագիր տեքստի համեմատությունը ցույց է տալիս, որ Ա. Գալայճյանը իրոք հարազատ է մնացել ինքնադրին՝ պահպանելով նաև հեղինակի «ուղղագրությունն ու լեզվա-քերականական որոշ զարտուղությունները»։ Ուզում ենք նորից հիշեցնել, որ հրապարակված բոլոր նյութերի ընդօրինակումները գտնվում են Ա. Չոպանյանի արխիվում։ Ութ նամակ ընդօրինակված է Ե. Դուրյանի աշակերտներից մեկի ձեռքով, եղբոր իսկ հսկողությամբ և ամփոփված մի տետրում, իսկ Խ. Նար-Պեյին գրած նամակը ընդօրինակել են Մ. Միհրդատյանցը¹⁸ և, հավանաբար, Հ. Ծանֆեսճյանը¹⁹։ Առանձին ընդօրինակությամբ է նաև Վ. Լուսթյանի դամբանականը։ Ուշագիր քննությունը ցույց է տալիս, որ ընդօրինակությունների և Ա. Գալայճյանի հրատարակած տեքստերում էական տարբերություններ չկան (ընդօրինակություններում առկա են միայն մի քանի վրիպակներ, երբեմն գրության թվականները զետեղված են ոչ թե նամակների վերջում, այլ սկզբում)։ Այս ամենը դարձյալ վկայում է, որ Ա. Գալայճյանի այս հրատարակությունը ևս վստահելի է։

Անկախ նշված թերություններից, գրախոսվող ժողովածուների արժեքը եզակիորեն մեծ է։ Ըստ էության առաջին անգամ մեծ քնարերգակի «արցունքոտ տողերը» լույս են տեսել անխաթար վիճակում։ Ընչ խոսք, որ այդ ժողովածուները լրջորեն կօգնեն Պ. Դուրյանի ստեղծագործությունների առաջիկա քննական հրատարակությանը։

Օգտվելով առիթից, ուզում ենք Ա. Գալայճյանի ուշագրությունը հրավիրել մի քանի կարևոր խնդիրների վրա։

Խոսքը «Տաղք» ժողովածուի առաջարանի մասին է։

¹⁸ ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆոնդ, № 4551։

¹⁹ Այս նամակի ընդօրինակությունը և Պ. Դուրյանի երեք բանաստեղծությունների ինքնագրերը ԳԱԹ-ի ստացել է վերջերս Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի միջոցով («Գրական թերթ» 1968, № 39)։

¹⁶ Տե՛ս «Մեղու», լրագիր, 4. Պուլիս, 1871, 19 հուլիս, թիվ 50։

¹⁷ Տե՛ս «Պետրոս Դուրյանի նամակների բանասիրական քննությունը» հոդվածը («Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, էջ 213—218)։

